ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՉՈՐՍ ՓԱՍՏԱԲԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ «HEDAC» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ

13.07.2022 15:22

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի
և Ֆրանսիայի Օ դը Սենի փաստաբանների միության միջև առկա համագործակցության շրջանակներում Հայաստանից մինչև չորս փաստաբան հնարավորություն կունենա մասնակցել HEDAC ամառային դպրոցի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, որոնք տեղի են ունենալու այս տարվա օգոստոսի 24-ին, 25-ին, 26-ին, 29-ին և 30-ին:

Դասընթացներին մասնակցելու համար կարող են դիմել ֆրանսախոս փաստաբանները:

Բնակվելու և ճանապարհի բոլոր ծախսերը պետք է հոգա անձամբ մասնակից փաստաբանը, Ֆրանսիայի Օ դը Սենի փաստաբանների միությունը ստանձնում է ամառային դպրոցի գրանցման վճարները: Դասընթացների մասին մանրամասն տեղեկատվություն կարող եք ձեռք բերել այցելելով հետևյալ հղումով. https://www.hedac.fr/ue2022:

Նշենք նաև, որ առաջին դիմողների թվում լինելը կդիտվի առավելություն:

Մասնակցության համար հայտերը անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2022 թվականի հուլիսի 14-ը ներառյալ:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })